ոններով զոհեր է տուել, գետերով արիւն հոսեցրել — նա կարծում է, որ մոգական գաւազանի մէկ հարուածով նրանք կ'իրագործուեն հայ միջավայրում, եթէ միայն հայերը հարկաւոր ցանկութիւնն ունենան, գիտակցեն իրենց պարտականութիւնները եւ պահանջուած մանր-մունր զոհողութիւնները յանձն առնեն: Հայ ժողովրդի ներքին էութիւնից դուրս գըտնըւող բոլոր ճակատագրական եւ անյաղթելի պայմանները նրա համար գոյութիւն չունեն:

Այստեղից էլ բղխում է գրքի էն ամենից գլխաւոր պակասութիւնը:

Բայց չնայած գրքի մի շարք ներքին եւ արտաքին խոշոր թերութիւններին, այնուամենայնիւ «Որոգայթ Փառաց»ը, ինչպէս ասացինք, մի շատ նշանաւոր երեւոյթ է մեր գրականութեան մէջ, իսկ նրա հեղինակը՝ մի նշանաւոր քաղաքական գործիչ-գրող: Նա առաջին հայ հեղինակն է, մանաւանդ վերջին դարերում, որ հայ ժողովրդի թշուառ վիճակը եւ նրա փրկութեան միջոցները գրականութեան խնդիր դարձնելով, քաղաքական տարր է մըտցընում հայոց գրականութեան մէջ: Եւրոպական մի շարք լուսաւոր գաղափարներ՝ ազատութիւն, հաւասարութիւն, հանրապետութիւն, օրէնք եւն. — առաջին անգամ նրա բերանից ենք մենք լսում — որպէս միջոցներ հայ ժողովրդի փրկութեան եւ երջանկութեան:

Դա՛ է այն չափազանց խոշոր ծառայութիւնը, որ Շահամիրեանը մատուցել է հայ ժողովրդին եւ նրա գրականութեանը:

Եւ այդ անգնահատելի ծառայութիւնը միայն բաւական է, որ նրա առջեւ նսեմանան ու մոռացուին նրա բոլոր թերութիւնները, որպէս հեղինակի: Թաւրիզ

ԼՐԱՑՈՒՑԻՉ ՆԻՒԹԵՐ Յ. ՇԱՀԱՄԻՐԵԱՆԻ ԿԵՆՍԱԳՐՈՒԹԵԱՆ1)

Յակոբ Շահամիրեանի կեանքը, նիւթեր չլինելու պատճառով, ընդհանրապէս անյայտ է եւ հարկաւոր չափով լուսաբանուած չէ: Անգամ այդ կեանքի ամենագլխաւոր էջերը անծանօթութեան թանձր քողով են ծածկուած եւ մենք չգիտէինք, թէ, օրինակի համար, ե՞րբ է ծնուած նա, ե՞րբ է մեռել, քանի՞ տարեկան, ո՞րտեղ եւն.:

Սակայն, վերջերս հնդկահայ բանասէր Մ. Սէթեանը իր «Ի Շիրակայ ցհնդիկս կամ ծագումն ջուղայիցւոց եւ հնդկահայոց» վերնագրով ուշադրաւ յօդուածի մէջ2) բերում է Շահամիրեանի տապանագիրը, որից մի շարք հանելուկներ բացւում են մեր առաջ:

Տապանագրից մենք իմանում ենք, որ նա մեռել է 1774 թուին, 29 տարեկան հասակում եւ թաղուած է Մալաքա կամ Մալայեան թերակղզու Մալաղա քաղաքում: Հետեւաբար մահուան թուականից եւ տարիքից պարզւում է նաեւ, որ նա ծնուած պիտի լինի 1745 թ.:

Դժբախտաբար ուրիշ տեղեկութիւններ Յ. Շահամիրեանի կեանքի մասին այլեւս չի տալիս յարգելի բանասէրը, որոնք անշուշտ շատ թանկագին կը լինէին մեզ համար — աւելի մօտիկից ճանաչելու այդ նշանաւոր մարդուն եւ նրան լաւ հասկանալու տեսակէտից:

Տապատանդիրը գրուած է ոտանաւորով, գրաբար է եւ շեշտում է հանդուցեալի ջերմ հայրենասիրութիւնը:

Ահաւասիկ նա իր իսկական ուղղագրութեամբ եւ ոճով.—

«Ողջո՛յն ընդ քեզ դամբարանի դառն ընթերցող,
Տուր ինձ լուրն ազատութեան ազգին իմոյ, որ եմ տենչող,
Եթէ յարեաւ ի մէնջ ոմն փրկիչ եւ կառավարող,
Ընդ որ յաշխարհի յաւէտ էի յոյժ ցանկացող:
Ես Յակոբս ի Հայոց մեծաց ի նախնեաց յառաջ եկող,
Որդի գոլով Շամիր Շահրեանց անուանն ընդունող.
Ծնայ ի նժդեհ աշխարհն Նոր Ջուղա Պարսից գեօղ,
Ի լնուլ ամաց 29-ից ընթացայ ի սեպհականութիւն իմ հօղ,
Յայս Մալաղա յեօթն յուլիսին եղէ կեանս իմ վճարող,
Ի թիվն Փրկչին 1774 հանդեայ յաղարակիս զոր եմ գնող»:

1) Տե՛ս «Հայրենիք, 1927 թ. թիւ 7.

2) Հ. Գարագաշ «Պարսկահայ Տարեցոյց», Թէհրան, 1927 թ., էջ 169–175: